Ը. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 3 ՕԳՈՍՏՈՍ 1905 — ԹԻՎ 736

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքից աւելի անքամանեռ համար 20 0/0 զեղչ կը լլայ:

—o—

Վստնայի համար ձեռքէ 10 սաթիմ է

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցէին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
„Charjoum"
Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքէ
15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքէ
20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԿՐԿԻՆ ՄԵՆՔ ՊԻՏԻ ՏՈՒԺԵ՞ՆՔ

—()o()—

Պոլսից վերջերս եկած հեռագիրները հաղորդում են որ Սուլթանի դէմ եղած մահափորձի առթիւ ձերբակալված Բելգիացի Ժորիս ումեն բան խոստովանած է իբր թէ. և այդ խոստովանութիւնների հիման վրա Թուրք կառավարութիւնը բուլգար կառավարութիւնից պահանջում է որ Ֆիլիպէյում և Սոֆիայում գտնըվող մի քանի հայեր կամ ոստիկանութեան հսկողութեան տակ առնվեն և կամ թէ ձերբակալվեն, որովհետեւ կապ են ունեցել դաւադիրների հետ։

Ժորիսի մօտ գտել են ծախսված հարիւր հազար ֆրանկի չեքեր և հաշիւներ, ինչպէս և նրա հասցէին Ժընէվից եկած մի նամակ են բռնել, որով Ժորիսին թելադրվում է ոչ մի ցուցմունք չը տալ։

Որքան ճիշդ են այս տեղեկութիւնները ի հարկէ մեզ յայտնի չէ, բայց որ կառավարութիւնը դաւադիրների գործակիցներ փնտռում է Ֆիլիպէյի և Սոֆիայի հայերի մէջ, այդ փաստում է թէ նա հակառակ այն լուրերի որ Եըլտըզում համոզված են, գոնէ արտաքուստ այդպէս են ցոյց տալիս, թէ մահափորձը Թուրքերի կամ Եւրոպայի անարխիստների գործն է, առանձին ճիգեր է թափվում հայերին մասնակից ներկայացնել Սուլթանի սպանութեան փորձին, ով գիտէ ինչ դժոխային դիտաւորութիւններից թելադրված։

Այսպէս թէ այնպէս Սուլթան Համիտը և իր շրջապատողները ճիգեր են թափում հայ ժողովրդի գլխին նոր փորձանքներ թափելու շարժառիթներ ստեղծել, ու հայ յեղափոխական մարմինների պարտականութիւնն է բացէ ի բաց հրաժարվել այդ ձրի մեղադրանքներից, ի լուր աշխարհի, առանց թագցնելու իրենց ուրախութիւնը այդ փորձի տեղի ունենալու և միշտ նրա անյաջողութեան մասին։

Ամեն մի հայ անհատապէս ցանկութիւն կունենար Սուլթանի հոգին առնել հարիւր հազարներով մորթված, տանջված, հալածված հայերի վրէժը լուծելու համար, բայց յեղափոխական կուսակցութիւնները չէին յանդգնի կատարել այնպիսի մի փորձ, որի անյաջողութիւնը կատաղեցնելով Սուլթանին մեզնից պէտք է խլեր մի քանի տասնեակ հազար թարմ գոհեր եւ աւելի վատթարացնէր արդէն մահուան դուռը հասած ժողովրդի կացութիւնը. բացի դրանից պիտի ապացուցէր թէ հայ յեղափոխութիւնը այնքան թուլացած է որ կը գոհանայ մի բռնակալ սպանելու տենչանքին բաւականութիւն տալով, որը թէև վրիժառութեան փառաւոր օրինակ կարող է լինել, բայց ապստամբած ժողովրդի ապստամբական ժեստ լինել չէ կարող։

Թերեւս հայ անհատներ միայն իրենց պատասխանատուութեամբ, մասնակցած լինեն այդ դաւադրութեան, առանց նոյիսկ հաղորդելու հայ յեղափոխական կուսակցութիւններին իրենց դիտաւորութիւնը, բայց կուսակցութիւնները և ժողովուրդը պարտաւոր են բացէ ի բաց հրաժարվել այդ գործից և պատասխանատուութիւնը ու հետեւանքը թողնել բաժին դաւադրութեան աջակցողներին կամ մասնակցողներին, եթէ իրօք այդ տեսակ հայեր գոյութիւն ունեն։

Մենք համոզված ենք որ մեր յեղափոխական կուսակցութիւնները այդ գործին մասնակից չեն. որովհետեւ նրանք հեռատեսութիւնը պէտք է ունենային մտածելու թէ Սուլթանի դէմ այդպիսի փորձ անելու համար, պէտք էր 100ին 200 համոզված լինել, որ նա անպատճառ պէտք է յաջողվի։

Արդէն ոչ մի հայ յեղափոխական կուսակցութեան օրգան չէ յայտարարում թէ այդ փորձը իր կողմից է. դա ապացոյց է որ մեր կուսակցութիւնները մասնակից չեն։ Մենք չենք կարծում որ մեր կուսակցութիւնները այնպիսի գործ կատարէին, որ չը կարողանային յայտարարել թէ իրենց գործն է։

ՎԱՐԴՕ

ԼԱՒ Է ՈՒԺ ՔԱՆ ԵՐԲԷՔ

—o—

Այսօրվան համարում «Դրօշակ»ից արտատպված երկու կտորների մէջ շատ բնորոշիչ կտորներ կան. որոնք ապացուցում են թէ ֆրանսական կառավարութիւնը, չը նայած մեր ահագին պրոպականտին հէնց Պարիզում, նշանաւոր ֆրանսացիների ազատութեամբ, հայերիս ոչ միայն զօրաւոր աջակցութիւն չէ ցոյց տուել հանդէպ Սուլթանի բռնութիւնների, այլ եւ ընդհակառակը նոյն կառավարութեան հիւպատոսը իրեն թոյլ է տուել մեր մի կաթողիկոսի հետ վարվել այնքան լրբօրէն, որչափ թուրք պաշտօնեաներն իսկ չեն վարվում, եւ ըստ երեւոյթին այդ Եւրոպացի պաշտօնեան հէնց այն հիւպատոսն է որ գնաց Սասունի խնդիրը քննելու եւ Սասունցիներին նպաստ ցրվելու։

Այս ճշմարտութիւնը յայտնված է «Դրօշակում» եւ մենք խորհուրդ ենք տալիս միամիտ ընկերներին լաւ ուշադրութիւն դարձնել այդ իրողութեան վրայ։

Երբ մենք մատնանշում ենք այդ տեսակ կէտեր, դառն իրողութիւններ, ցոյց ենք տալիս մեր մուրացկան պրոպականդի անօգտակարութիւնը, առանց ներքին զօրաւոր ուժի գոյութեան, Դաշնակցութեան մէջ գտնված ստորին, կամ միամիտ տիպերը յուզվում, բորբոքվում են. եւ մեր յայտնած դառն իրողութիւնները վերագրում անձնական նկատումների։

Վանի ֆրանսական հիւպատոսի ստորին վարմունքը այսօր դալիս է փաստելու որ «Պրօ Արմէնիան» իր ականաւոր հովանաւորողներ ամբողջ ներկայութեամբ իսկ չէ կարողացել նոյնիսկ ազդել մի հիւպատոսի վրա այնքան որ նա գոնէ ազատվէր հայ վանքից ձրի ձիեր գնելու ստոր դիտաւորութիւնից։

Եւ եթէ այսպէս ընթանայ մենք դեռ շատ տխուր երեւոյթների հանդիսատես կը լինենք։

«Դրօշակ»ի մէջ հրատարակված երկրորդ մեզ համար կարեւոր կէտը Դելկասսէի հրաժարականի մասին է։

Թղթածագիրը լռելյայն յայտնում է թէ հայերի ունեցած յոյսերը այդ նախարարի վրա օդը ցնդեցին։

Հայութիւնը երբէք յոյս չէ ունեցել եւ այդ նախարարի վրայ. ընդհակառակը եւրոպական պրոպականդին մեծ կարեւորութիւն տուող գործիչները աշխատել են արհեստականօրէն զարգացնել այդ Մեծ յոյսը հայերի մէջ եւ նրա անանկութիւնը մատնանշողներից դժգոհ են եղել։

«Դրօշակ»ի համար միայն այսօր է յայտնվել կարծես որ Դելկասսէն գարի հաւատարիմ ծառան էր, եւ Հանոտոյից տարբերվում էր նրանով միայն որ առաջինի չափ սինիք չէր։ Լաւ է ուշ քան երբէք։ Ուրախ ենք որ այսօր «Դրօշակ»ն էլ լռելյայն հաստատում եւրոպական մեծամասն պրոպականդին բացարձակ անանկութիւնը, որի մասին «Շարժում»ը շատ առաջ մի քանի անգամ արդէն նկատել եւ շեշտել է։

Այս քանի մենք զօրաւոր յեղափոխական ուժ չենք ներկայացնում եւրոպան մեզ ոչ մի կարեւորութիւն չի տայ, ու նրա հիւպատոսներն էլ մեզ հետ կը վարվեն այնպէս, ինչպէս վարվում են Թուրք պաշտօնեաները։ Ու ժամանակ է որ Դաշնակցականներս այդ դառն ճշմարտութիւնը եւս ըմբռնենք ու դադարենք անպատուաբեր մուրացկանութիւնից։

Չը մոռանանք նաեւ այն որ Ֆրանսան նոյնքան ուրախութիւն զգաց Սուլթանի վերջին մահափորձից անվնաս ազատումի համար, որքան եւ միւս պետութիւնները։ Մինչդեռ հանրապետական եւ իր հարազատ թագաւորները գլխատող Ֆրանսան ամենից լաւ գիտէ թէ Թուրքիոյ մէջ տիրող գաղանութիւնների միակ պատճառը եւ ղեկավարը ինքը Սուլթան Համիտն է։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆՈՐ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՆ, 15 ապրիլի

Երկրի կացութիւնը վերին աստիճանի նեղ է. սովը տիրապետող համարեա բոլոր խաւերին։ Կառավարութիւնը օգուտ քաղելով այդ հանգամանքից, սկսեց «աչքակապուկ» խաղալ։ Բարեգործութեան դիմակի տակ

չարիքներ ստեղծելը այս երկրի համար օրէնք է։ Մի ամիս առաջ լուր տարածուեց, որպէս թէ կառավարութիւնը քաղցած ժողովրդեան նպաստներ բաժնելու բալի ցանկութիւն ունի։ Եւ կատարուեց նպաստի բաշխման գերաշխարհային հանդէսը, լի թիւրք վարչութեան բազմատեսակ խաղերով։ Ամէն մի ընտանիքի պիտի վճարուէր հինգ դահեկանի պէս մի մեծ գումար։ Արդեօք սա էլ մի ծաղր չէ՞ քաղցած ժողովրդեան։ Բայց դա դեռ բոլորը չէ։ Ամէն մի ընտանիք պարտաւոր է ունենալ իր կնիքը, որպէսզի ստացականների տակ զարնէ իր մէ օ հ-ը։ Խե՛ղճ գիւղացին պարտաւորուեցաւ 100 փարայի մի կնիք չինել տալ, ուրեմն իր ստացած նպաստի—5 դահեկանի կէսը պիտի յատկացուէր գործառնութեան վաւերացման։

Բայց պարզուեց, որ դա ոչ թէ նպաստ էր, այլ բանկային փոխառութիւն, որի դիմաց գիւղացին գրաւ պիտի դնէ իր արաբը, գուցէ և մի այլ նպատակի ծառայէ այդ չարագուշակ հինգ դուրուշը։

Հայոց Զորի, Թիմարի և մի քանի գաւառների ժողովուրդը չը հասկանալով բանը ինչումն է, ընդունեց, ուշտունցիք մոկացիք և կաղկացիք մերժեցին բացարձակապէս։ Ուրեմն գնդակը միայն մասնակի նպատակին հասաւ։ Այս օրերս Ոստանի գայմագամութիւնը ազատ արձակեց Նարեկի դէպքի յայտնի ոճրագործներին։ Լրագրոնիսայ չէյս Ռաշիտի լամուկը, որ յայտնի բարբարոս է Ուշտունիքում և որը Նարեկի մէջ ամենամեծ դերն է կատարել, ազատ արձակեցին, որպէս միանգամայն անմեղ Նարեկի խնդրում։ Նոյն դէպքի մէջ յայտնի եղած Աւանին, որ մինչեւ հիմա փախստական վիճակ ունէր, Ոստանի գայմագամութեան կողմից ազատութիւն չնորհուեց, ի խրախոյս իր կատարածոճիրների։

Նարեկցի Բաղալ անուն տնէր, որպէս քաղաքական յանցաւոր դատապարտուած է։ Խալիլ էֆ. վկայել է, որ ոստիկան Աբդիւլ Համիդի սպանողը Բաղալն է և ինքը այդ տեսել է 3–4 քայլ հեռաւորութիւնից։ Զարմանալի բան. 18 Նարեկցիներ հրապարակօրէն սպանող քրդերն ու ոստիկանները անմեղ են ճանաչուում, իսկ մի ոստիկանի համար—որի սպանողն անյայտ է—քաղաքական յանցաւոր են գտնում Նոյնիսկ Ամերիկայում։ Նարեկցի Արսէն անուն երիտասարդը, որ դէպքից երկու ամիս առաջ Ամերիկայ էր գնացել 8–10 տարուայ բանտարկութեան դատապարտուեց Մոխրաբերդ գիւղի Ռափայէլ վարժապետի համար, որ փախստական է, Նոյնպիսի բանտարկութեան վճիռ է արձակուած։

Ներկայիս Ուշտունիքի երեք գիւղերում զօրք է դրուած։ Նոր-գիւղ 40, Նարեկ 18 և Փախնէր 40 զինուոր։ Փախնէրի մէջ զօրքերը Մանուկ անուն սրիկայ անձի միջնորդութեամբ բռնաբարել են մի քանի կանանց, որոնց անունները անկարող եղանք ձեռք բերել։ Նոր-գիւղ և Նարեկ սարսափելի բռնութիւններ են գործ դրուում. ծեծում են, զոհերի մէջ բանտարկում են, կաշառք են առնում. Կարճկանի Մուսա բէյը վերսկսել է իր վայրագութիւնները։ Մարտի վերջերին նրա հրահանգով՝ իր մարդիկը յարձակուել են նոյն գաւառի Սորբ գիւղի վրայ՝ մի քանի յայտնի մարդկանց սպանելու. տղամարդիկ գիւղից փախչում են, ու քիւրդերը ձեռք ձգելով անտէր մնացած կանանց՝ բռնաբարում են առանց հասակի խղճութեան։ Նոյն բէյը սպառնում է գաւառի բոլոր յայտնի մարդկանց կեանքին. որոնք չտանելով Մուսա բէյի անսահման լկանքները, միդիրուութեան պաշտօնից ձգեցին նրան՝ կուսակալին աղերսագիր ներկայացնելով։

Թողնենք քրդական բարբարոսութիւնները, դառնանք եւրոպական հիւպատոսներին։ Ֆրանսիական հիւպատոսը տասն օր առաջ ցանկանալով գնել Աղթամարի կաթողիկոսարանի ձիերից մէկը, կառավարիչը իսկոյն ձին ղրկում է նրան եւ գինը յայտնում։ Հիւպատոսը երկու մէճիտիէ նէէր է տալիս ձին տանողներին ու հեռացնում։ Երեք օր վերջը կաթողիկոսարանը դրամական նեղութիւն ունենալով, մի գրութեամբ ձիու գինն է խնդրում։ Հիւպատոսը զայրացած՝ յետ է խլում իր նիրած երկու մէճիտիէն եւ քակել տալով ձիու պայտերը, ծեծել է տալիս կաթողիկոսարանի մարդկանց, դուրս վռնդում եւ սպառնալով կաթողիկոսարանին, անմիջապէս վազում է կուսակալի մօտ։ Նրանց մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը անյայտ է. այսքանը միայն գիտենք, որ Ատհամ բէյ, խլելով ձին՝ նորից ղրկում է հիւպատոսին։ Վճարի տալը անյայտ է։ Տանջուած ժողովրդին այդ տեսակ դէպքեր էին պակաս։

—o—

Դելկասսէն գնաց։ Եօթ տարի մինիստրութիւն—հազադէպ երեւոյթ ֆրանսիական Հանրապետութեան կեանքում։ Եօթ տարի նա վայելում էր իր հայրենակիցների յարգանքը եւ իբրեւ ճարպիկ դիւանագէտ, ընդհանրապէս խաղարարար, որոշ հմայք էր վաստակել նաեւ Ֆրանսիայից դուրս։ Բայց այժմ հեռացաւ, գրեթէ նզովուած նոյն հայրենակիցներից, բողոքների ու պարսաւանքների տարափի տակ։

Դուրս է գալիս, որ սխալուած են եղել նրա ընդունակութիւնների եւ խաղաղասէր զգացումների վերաբերմամբ Նա հանդէս է գալիս այժմ, որպէս մի չարոգի, մի մեծամոլ ինտրիգան, որ նպատակ ունէր իսպառ մեկուսացնել Ֆրանսիայի աւանդական հակառակորդին, Գերմանիային, եւ պատրաստել ռըվանշի, վրէժխնդրութեան մեծ հարւածը, որը, սակայն, ռըվանշի տեղ կարող էր մեծամեծ աղէտներ բերել նախ եւ առաջ իր Հայրենիքին, Ֆրանսիային։

Մինիստր Դելկասսէն քիչ դեր չը խաղաց եւ թիւրքական Արեւելքի գործերում. Նա սուլթանական տիրապետութեան հակառակորդ էր եւ ատուած էր Երիտզրզ Քեսքում։ 1901 թ. ֆրանսիական նաւային ցոյցից իվեր (որը, ինչպէս յայտնի է, վերջացաւ Ֆրանսիայի պահանջների յաղթանակով) Սուլթանի աչքը վախեցած էր Դելկասսէից։ Եւ այդ վախը առանձնապէս շեշտուում էր Կ. Պոլսում ամէն անգամ, երբ հայկական խնդիրը հրապարակ էր նետուում Ֆրանսիական մամուլի եւ մանաւանդ պարլամենդի մէջ։

Կային բոպէներ, երբ թիւրքահայ ժողովուրդը ոգեւորուում էր Դելկասսէով եւ նրա վրայ յոյսեր էր դնում։ Եւ իրօք նա լաւ էր տրամադրուած մասնաւորապէս դէպի հայերը եւ աջողեց անել ու անել տալ ուրիշներին մի քանի համեստ քայլեր ժողովրդի ապահովութեան համար (հիւպատոսների աւելացումը թիւրքաց հայաստանում, կորովի ազդարարումները թիւրք կառավարութեան առաջ՝ նոր խմբական կոտորածներ սպառնալու դէպքում եւայլն)։ Հանօտօ-ճիւազից յետոյ, Դելկասսէն մի հրեշտակ էր հայութեան համար։

Սակայն շուտ պաղեց հայի ոգեւորութիւնն էլ։ Վճռական բոպէներում, երբ հայոց ճգնաժամի արմատականլուծման խնդիր էր դրուում հրապարակի վրայ այդ հրեշտակը եւս դաւաճանեց մեզ—յիշենք նախորդ տարուայ Սասունի ապստամբութիւնն ու տագնապը, Ֆրանսիայի վարանումներն ու յապաղումները—և ապացուցեց, որ գիտէ հլու սպասաւոր լինել ցարի կառավարութեան ու «ալլիանսին»...

„ԴՐՕՇԱԿ"

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՌՈՒՄԱՆԻՈՑ . . . . . ԸՆԿԵՐԻՆ

Սիրելի . . . . . ընդունցի յուզված հոգուդ արտայայտութիւն անկեղծօրէն գրված նամակդ։ Դու ինձ առաջարկում ես չը չարանալ զանազան թէնէքեր-

Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՕՐԻԱ ՊՍՎԼՕՎՆԱ

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Դրագէտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական suroriնակ հասարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

52

Ժ.

(Շար. նախորդ թիւեն)

Մեր հայրերը կնոջ մեծաքանակ լաւ խօսքեր ասացին եւ սիրով թոյլ տուին միշտ նոյն տան կողքովը անցնել, առանց երկար ժամանակով տընից բաժանվելու, այր մարդոց կողմից արդէն տրորած հանրային ճամբաներով, որոնք արդէն այր մարդկանց համար կորցրել էին իրենց հրապուրանքը եւ կեանքի հրապարակում ոչ մի արժէք չունէին։—Ահա այս եւ այն արդիւնաւէտ եւ լուրջ աշխատութիւնները պէտք է մնան այր մարդոց, ուժեղ սեռին, իսկ այս ինչ եւ այնինչ աշխատութիւնով զբաղել կարելի է թոյլ տալ եւ կանանց, որոնք ազնիւ, գործակատար են, չեն հարբում եւ պատրաստ են փոքրիկ վարձով աշխատել։ Եւ այդ կոչվում է կանացի անկախութիւն։ Անձնատուր եղիր եւ երջանիկ։

Կինը շատ ուրախացաւ այր մարդկանց այդ վեհանձնութիւնով եւ այդ ճամբաները տրոտորում է գովելի եւ յուզիչ անձնուիրութեամբ, որի համար եւ գովասանքների է արժանանում նրա խելքը եւ տաղանդը։

Կինը երկար հաւատում էր եւ դեռ հաւատում է մեծ գաղափարներին, շարունակում է սոված մնալ ցրտին դիմանալ։ Ռուս կնոջ պատրաստակամութիւնը զոհվելու ապագայ կանացի սերնդների բարօրութեան համար զարմանալի է։ Այնու ամենայնիւ հոգին ուժեղ է բայց մարմինը տկար. ամենասովորական այր մարդի հետ աշխատութեան հաւասարութիւն պահանջող կնոջից մենք պահանջում ենք որ նա լինի տարօրինակ անձնազոհ հերոսուհի. միայն ինքնօգնութեան ֆանատիկոսութիւնը կարող է հաշտվել այն չնչին շահի հետ որ Ռուսաստանում տալիս է կնոջը տաժանակիր աշխատանքի պայմաններով աշխատութիւնը։ Ի նախատինս մեր սեռի, թոյլ կէսը» ռուս բնակչութեան արտաքերել է եւ դեռ արտաքերում է հերոսուհիներ գրեթէ նոյնքան որքան «ուժեղ կէսը» սովորական տիպեր որոնք դժգոհում են թէ կիները իրենց հացը խլում են։

Սակայն ոչ մէկ ցեղ եւ ոչ մէկ փուլ չեն կարող յուսալ որ կարտադրեն անթիւ հերոսուհիներ, անօգուտ կամ քիչ օգտակար անձնուիրութիւնը անարժէք է դառնում, իր միտքը կորցնում, ինչպէս, ֆանատիզմը, վարձատրվելով միայն հիասթափումներով մարում է կասկածներում։ — Բարեսիրագաղափարական գործունէութիւնը հիանալի է ասեց ինձ Վիկտորիան մտածկոտ կերպով. բայց ինչի այր մարդիկ այդպիսի բացառիկ վեհանձնութեամբ այդ գործը միայն կիներին են յանձնել։ Ի հարկէ մեզ համար չոյելի է որ մեզ այդպէս անշահասէր ազնիւ ենք աշխատութեան մէջ եւ մեր գինը արժան, բայց մենք շատ սիրով կը գերադասէինք որ մեզ կատարեալ հրեշտակներ չը համարէին, նոյն իսկ մի քիչ մեզ հայհոյէին. բայց կարելիութիւն տային որ մեր աշխատութիւնը իրօք վարձատրվէր, ապահովէր մեզ։

Աշխատող կնոջը հասարակութիւնը չէ կերակրում, կամ կիսատ է կերակրում. մրսեցնում է ցուրտ սենեակում, կամ հագիւ միջոց է տալիս շաբաթը երեք անգամ վառարան վառել։ Հերոսուհիների եւ ֆանատիկոսների համար այդ ոչինչ է, բայց կրկնում եմ անկարելի է ամբողջովին հերոսներից եւ ֆանատիկոսներից կազմված հասարակային դասակարգ գտնել. եւ միայն այդ տեսակների միջոցով կատարված աշխատութիւնը հաստատուն չէ։ Ո՞ւ է հասարակութիւն ապրում է իր եռանդի միջին մասը ծախսելով եւ նրա միջակութիւնը միայն պահանջելու իրաւունք ունի իր անդամներից։ Ամեն մէկ զինորից չէ կարելի պահանջել որ նա լինի Սկոբելեւ կամ Տօտլէպէն, բժշկական կոչումը միայն Զախարիններին եւ Բոտկիններին չէ տրվում. իրենց գրութիւններով միայն Գորկիները, Զէխովները չեն ապրում։

Աշխատաւոր կնոջից էլ չէ կարելի պահանջել որ նրանցից ամեն մէկը Սոֆիա Կովալեվսկայա լինի, որպէս զի այդ միջոցին միայն մեր լուսաւորեալ ուշադրութիւնը դարձնենք կնոջ վրա եւ հիանանք նրանով։

Պէտք է որ բոլոր աշխատող կիները գոհացուցիչ վարձատրութիւն ստանան իրենց աշխատութեան համար, ինչպէս այր մարդիկ, եթէ ոչ զարմանալու էլ պէտք չը կայ եւ ոչ էլ բարկանալու թէ ինչի կանանց

ճիներրի, պախալներրի վրա և կազմակերպութիւնը չը վար կաբեկել, գործից չը քաշվել. դու հաղորդում ես որ ինձ լաւ կը ճանչնաս թէ՛ անձամբ և թէ՛ ուրիշ կարեւոր ընկերներու ոգեւորված վկայութեամբ, ու ոչ մի կարեւորութիւն տալով իմ դէմ եղած չրջաբերականներրին ու պատմվածներրին առաջարկում ես թերթով միասին անցնել Ռումանիա և այդտեղ ձեզ բոլորիդ հետ միացած զատվել Բուլգարիայից և առանձին կեդրոնական կոմիտէ ստեղծել ու անկախորէն յարաբերութիւն ունենալ բիւրօի հետ, դու խոստանում ես ամեն աջակցութիւն յայտարարելով որ «գէշ մարդիկը մենք կարող ենք հեռացնել»։

Այս բոլորից նկատվում է որ դու կարծում ես թէ անձերի դէմ բարկացած լինելուս պատճառով է որ այս դիրքն եմ բռնել։ Ոչ բարեկամ անձերը ինձ չեն հետաքրքրում. ես կռուում եմ այն սիստէմի դէմ, որ գործը սխալ հիմերի վրա է դնում և այդ կռիւը ինձ ստիպում են մղել այն վաղամեռիկ հերոսների ուրուականները, որոնք մեռան մեզ կտակելով յեղափոխութիւնը մաքրել հացկատակներից, շարլատաններից և դնել հաստատուն հիմերի վրա. ես կռուում եմ որ երկրի գործը հաստատ հիմերի վրա գրվի. նախ երկրի գործը, ապա արտասահման։ Սխալվում ես, իմ բռնած դիրքով Դաշնակցութիւնը չի վնասվի. ընդհակառակը նա կօգտվի, կը դառնայ զուտ յեղափոխական կուսակցութիւն. նոր Բաբկէններ ծնելու ընդունակ մի կազմակերպութիւն։ Ես պառակտում ստեղծելու միտք չունիմ կուսակցութեան մէջ և ո՛չ էլ տրամադիր այդպիսի մի հոսանքի գլուխ կանգնելու. իմ միակ նպատակս է մեր կազմակերպութեան մէջ թագաւորեցնել տալ զուտ յեղափոխական սկզբունքներ և գործի ծանրութեան կէնտրոնը տեղափոխել երկիր։

Ես հաւատում եմ քո անկեղծութեանը. պատրաստ եմ ձեզ աջակցելու որ ձեր երկիրը և ընկերները չը շահագործվեն ստոր տիպերի ձեռքով, բայց ձեր կողմերը գալ ներկայումս համաձայն չեմ։ Մանրամասնութիւնները բերանացի կը խօսենք. երբ շուտով թերեւս միմեանց տեսնենք։

Առաջարկում ես նաեւ հաշտութեան միջնորդ հանդիսանալ սրա և նրա հետ. ես ոչ օքի հետ կռուած չեմ. կան մարդիկ որոնց արհամարում եմ, իսկ արհամարածս մարդկանց հետ հաշտութեան խնդիր լինել չէ կարող. կան մարդիկ որոնց հետ կարծիքներով և ուղղութեամբ տարբեր եմ, այդ տեղ էլ հաշտութեան խնդիր լինել չէ կարող. որովհետեւ նրանց հետ պատահելիս ես չեմ մոռանում տալ նրանց այն յարգանքը որին տրժանի են։ Դրամները իհարկէ կը յանձնվեն այնտեղ ուր որ պէտք է. և այդ տեղը ներկայումս միայն ընդհանուր ժողովն է իմ աչքում։ Եւ դրա համար ես իմ հիմնաւոր ու էական պատճառները ունիմ, որոնցն հրապարակի նիւթ չեմ ուզում դարձնել, հէնց Դաշնակցութեան շահը աչքի առաջ ունենալով։

ՎԱՐԴՕ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐՈՒ ՄԷԿ ՀԱՂՈՐԹԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յուլիսի 30ին Պոլսէն կը հեռագրեն հետեւեալը.— դեսպանատունները կիմանան որ ոստիկանութիւնը յաջողած է բռնել երիտասարդ թուրքերու հաղորդագրութեան բաղմաթիւ համարներ, յայտարարուած Սուլթանի դէմ եղած մահափորձի առթիւ մեծ քանակութեամբ տարածուած է Ստամբօլի մէջ։

Այդ հաղորդագրութեան մէջ կայ ֆէթվայի մը (վճիռ) բընագիրը. որ ձեւակերպուած է թրքական 18րդ դարու իրաւաբաններու որոշումներուն համաձայն. այդ ֆէթվան հետեւեալ հարցը կը դնէ.—ինչ պէտք է ընէ Մուսուլման ժողովուրդը, երբ Սուլթանը օրինականութենէ դուրս եղած է և իր զզուելի կառավարութեամբ իր ժողովուրդներուն համար սառեղծած է թշուառ կեանք մը։

Հարցին ալ պատասխանը այս.—Մուսուլմանները պարտաւոր են կտոր կտոր ընել Սուլթանը և իր մերձաւորները։

Այդ հաղորդագրութեան մէջ աւելցուած է և այն, որ իրենք փորձ ըրին Եըլտըզի առջեւ Սուլթանը փոյթի վերածել ինչպէս և անոր մերձաւորները, որպէս զի այդ ֆէթվան [illegible]։

Պալատի մէջ շատ աղէկ գիտեն որ այդ դաւադրութիւնը կազմակերպուած է մուսուլմաններու առաւելապէս երիտասարդ թուրքերու կողմէն, բայց վախնալով որ կրնայ վատ հետեւանքներ ունենալ եթէ մուսուլման աշխարհը իմանայ, ատոր համար ալ կուզեն եւրոպացիներու վրայ նետել։ Այսօր հարցաքննիչ յանձնախմբին անդամները յայտարարեցին որ Փօրիսը կատարեալապէս իսոստովանած է. դաւադրութեան սկիզբը գրուած է 8 ամիս առաջ, և եւրոպացիներու միջոցաւ։ Սակայն Փօրիս այդպիսի բան չէ յայտարարած Պելճիգական դեսպանատուն երկրորդ թարգմանին առջեւ, որ բոլոր հարցաքննութեան ներկայ եղած է։

Պելճիգայի դեսպանը կրկին Փօրիսի ազատումը կը պահանջէ։

ՋԱԲՈՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պայմաններու բնագիրը յայտնի չէ, որովհետեւ Ֆամբերան Ուիթէէն խնդրած է հրապարակի նիւթ չը դարձնել, մինչեւ իրեն պատասխանէ բայց Լօնտոնի „Ռէյթըր»ի հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէ որ պայմանները հետեւեալներն են։

1. Ռուսները ճաբոնացիներուն պիտի զիջանին Լիաօթունկ թերակղզին մասին ունեցած կօնսէսիոնները. այսինքն Բօրթ-Արթուր եւ Տալնի նաւահանգիստները։

2. Պիտի պարպեն Մանչուրիան, ստացած ամէն առանձնաշնորհումները վերադարձնելով Չինացիներուն. եւ պիտի ընդունին բաց դուռերու սկզբունքը։

3. Ռուսները Խարպին, Բօրթ-Արթուր

բանակում, մեծ գործի սիրուն մեռնողների մէջից փախչողներ են լինում։

Մարդը երբ մրսում է, նա տաքնալու տեղ է փնտռում, երբ անօթի է հաց է փնտռում. քաղաքացիական եւ կրթական իրաւունքներից զուրկ կինը աւանդական աշխատանքի ճամբաներում անօթի մնալով բնական է որ փնտրում է այն ճամբաները որտեղ կինը կուշտ կարող է լինել։ Ու մեծ սարսափով վերջ ի վերջոյ հակառակ այր մարդոց բոլոր ազատական երգերին, կնոջ համար յաջող ճամբաներ ներկայանում են նրանք ուր միայն սեռական յատկութիւնները պէտք են։

Ցարգելի եւ լաւ է ամուսնական կեանքը. անպատաբեր, բայց կուշտ է պոռնկայինը. վերջին ճանապարհը շատ զզելի է կանացի ամօթխածութեան եւ անձնասիրութեան համար, շատ ցեխոտ եւ ստորնացնող քրիստոնէական բարոյագիտութեան քըսան դարվան ջանքերի չնորհիւ եւ դժուար թէ զարգացած կնոջ համար մրցման միջոց ընդունվի. թէեւ անմտութիւն էլ կը լինէր բոլորովին այդ ճամբի մրցակցութիւնը մերժել։ Ուրիշ խնդիր եթէ կինը հրաժարվում է անկախութիւնից եւ ինքնօգնութիւնից յօգուտ ամուսնութեան, որպէս զի «տեղաւորվի»։ Ցուրտ եւ անկուշտ աշխատութեան մէջ միջակ կինը ոչ հերոսուհին նախանձով տեսնում է կողքին գտնված տաք տունը, որտեղից նրան դուրս են հանել։ Ներկայումս այդ կոչվում է ընտանիք կազմել. ամուսնացաւ եւ կազմեց. սովորական խօսքեր են դրանք բայց եւ մահու տրձանագիր երեկվան գործոնեայ աշխատաւորուհու համար։

Աւելի համարձակ եւ խելացի կինները այր մարդկանց ասում են.— դուք ձեր ցոյց տուած ճամբաներով մեզ խաբել էք. այն ճամբաները որոնք տանում են դէպի պալատները եւ ապարանքները դուք ձեզ համար պահեցիք. իսկ մեզ թողել էք չաւիղները որոնք մեզ տանում են դէպի փոսերը եւ դատարկ տարածութիւնները։

Ու սկսում են ելք փնտռել այդ կացութիւնից, իրենց խելքով եւ միջոցներով. այր մարդը այդ պարագայում բարեկամից եւ դաշնակցից վերածվում է գիտակցող թշնամու եւ նրանց ազատութեան դաւաճանի։

Այդ մենք ենք անում ենք կանացի ըմբոստութիւն, «կնոջական հարց». եւ դրանից մենք պարոն այր մարդիկս վախենում ենք, հանդուրժել չենք կարողանում եւ դրա հանդէպ հնարել ենք մեծաքանակ խաբեբայութիւններ, որոնք բարձրացնում են ստորին ճշմարտութիւնները. զիջողութիւնները. կենսական կեղծարարութիւններով թէ կանացի եւ թէ աղամարդի անձնասիրութիւնը փոխադարձաբար խաբող նախադասութիւններով եւ կեղծիքներով։

Այդ զիջողութիւններից մէկը՝ ընտանիքի գաղափարի ընդլայնումը, շատ ձգված, մեծ մասամբ կեղծ, ոչ անկեղծ, բայց գոնէ երեւութապէս լաւ է ընդունվում։ Ներկայ դարը թեթեւօրէն է վերաբերվում դէպի ապօրինի կապերը, ապօրինի ծնունդները։ Այդ համարվում է հասարակութեան զիջողութիւն ի նպաստ կնոջ, նրա մարդկային իրաւունքների կանոնաւորում։ Երբ ես կարդում եմ պատմութիւնը այդ զիջողութիւնների-կանացի հարցի անուան տակ, միշտ մտածում եմ.—աղամարդիկ որչափ ճարպիկութիւն եւ գեղեցիկ հրնարագիտութիւն են գործ դնում կը նոջը ծուռ մուռ ճամբաներով դէպի ննջարան եւ խոհանոց ուղղելու, ու երբ կինը յանկարծ ինքզինքը ննջարանում կամ խոհանոցում է գտնում եւ չըզգալով այդ ննջարանը տաճարի իսկ խոհանոցը աշխատանոցի տեղ է ընդունում։

Բայց «այր մարդը» որչափ էլ որ խորամանկ զբսպանակներ գտնէ անկարելի է յաւիտենապէս դիմակ կրել, եւ ճշմարտութիւնը պէտք է որ յայտնվի։ Հետզհետէ շատանում են աշխարհում այն կիները, որոնք ըմբռնում են թէ ըստ երեւութին կանացի անկախութեան ամենաազատական սիստէմը իսկ, որ պաշտպանվում է ազատական այր մարդկանց կողմից, իր ներսում կրկին կրում է սեռական ստրկութեան սերմը։ Կնոջ անկախութիւնը կարելի է միայն այն պարագային, երբ նա կը կարողանայ սեռական տարրը դուրս վանել կեանքից միւս սեռին վերաբերող յարաբերութիւններում կամ կամ թէ վճռողապէս կը մերժէ այր մարդկանց հրամանատար լինել իրեն սեռական կամքի եւ կեանքի. վճռողապէս ինքզինքը իրեն տէրը կը հռչակէ, ապրելով իր սեփական բարոյագիտութեամբ, իր խելքով, խղճով բայց ոչ այր մարդի կողմից դարերի ընթացքում ստեղծված բարոյագիտութեամբ որ հիմնված է Ադամի Եւայի հանդէպ ունեցած առաջնութեան պայմանի վրա։

(Շարունակելի)

թուր, Տալնիի երկաթուղիին գիծը պիտի յանձնեն ճաբոնացիներուն իրենց պահելով միայն Խարպին—Վլատիվոսթոքի գիծը։

4. Պիտի ընդունին ճաբոնի թեւարկութիւնը Քորէայի վրայ։

5. Ռուսիան պիտի ընդունի ճաբոնի ձուկ որսալու իրաւունքը Սիպիրիական ջուրերու մէջ, մինչեւ Պերինկեան նեղուցը։

6. Ռուս պատերազմական նաւերը որ աքսորուած են չէզոք նաւահանգիստները պիտի յանձնուին ճաբոնի։

7. Ռուսիան պիտի վճարէ ճաբոնի պատերազմական ծախքերը որոնց թիւը վերջը պիտի նշանակուի։

Ճաբոնական գոկիւմանի մէջ խուսափուած է պատերազմական տուգանք խօսքի գործածումէն, այլ գրուած է «ետ դարձնում» խօսքը։

Նոյն գործակալութիւնը կը հաղորդէ որ այս պայմանները չատ ծանր տպաւորութիւն գործած են ռուս լիազօրներուն վրայ. գլխաւորապէս ընդունելի չեն Սախալինի զիջումը, ազատ ձկնորսութեան ստորնացնող պահանջը եւ ծովային ուժերու սահմանափակումը։

Լոնտոնի քաղաքական շրջանակներ ։ մէջ ճաբոնական ներկայ պայմանները նուազագոյնը կը համարուին։ Այսինքն այն տեսակ որոնց վրայ Ճաբոնիա ամեն գնով պիտի պնդէ։

Ռուսները կընդունին այդ պայմաններուն երկու երրորդ մասը. սակայն Պորտսմուտի մէջ տիրող համոզումը անէ որ Ռուսիա սկզբունքով հակառակ է պատերազմական տուգանք վճարելուն, Սախալինի զիջումին, ռուս նաւերը յանձնելուն, եւ Ծ. Արեւելքի ջուրերուն մէջ ուժի պակսեցնելուն։

Ռուսները ճաբոնական պայմաններուն ուժ կէտերը միայն կընդունին։ Անընդունելիներու մասին վիճել չեն ուզեր։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Յուլիս 30ին պ. հ. գործակալութեան կը հեռագրեն հետեւեալը։ Պալատին մէջ կը կարծեն որ միակ լուրջ ձերբակալութիւնը Ժորիսին է, որ Սինգէրի վաճառատան մէջ պաշտօնեայ է։ Ժորիսի կինը ռուսահայ անիշխանականի մը հետ Պոլսէն փախած է։ Ժորիս որ պալատի մէջ բանտարկուած է խօսելէ կը հրաժարի։ Պելճիքայի դեսպանը չը յաջողեցաւ զայն ազատել, որովհետեւ յանցանքը դաշնագրութիւններու մէջ եղածներէն չէ։ Սուլթանը այնչափ համոզուած է թէ Ժորիս կրնայ կարեւոր տեղեկութիւններ տալ մահափորձի մասին, որ Պելճիքայի դեսպանեն խնդրած է Ժորիսը խօսիլ ստիպել խոստանալով որ անոր ՁԱՍ մը չը պիտի հասցնէ և նոյն իսկ դրամական վարձատրութիւն պիտի տայ։ Վերջի վերջոյ նորէն խնդիրը կը դառնայ ենթադրութիւններուն շուրջը, որոնք շատ են և իրարու հակասող։

Գործին հետեւողներու կարծիքը ան է որ զօրաւոր գժոխային մեքենան բերուած է Եւրոպայէն և անփորձ ձեռքեր են զայն գործ դնողները որ և կը հասատատուի առաջները պատմուածը թէ վիրաւորուածները նկատած են որ կառքերուն ետեւը կանգնած էր թուրք սպայ մը որ պայթելու վայրկեանին հրաման տուած էր։ Այժմ լուծելի կը մնայ Պոլսոյ մէջ երկու ռուսահայ անիշխանականներուն ներկայութեան խնդիրը, որոնց հետքերը գտնել չեն կրնար ու ներկայութիւններին երկրորդ փորձի մը վախը կը պատճառէ։

ՌՈՒՍԻԱ

Յուլիս 30 ին գահաժառանգի ծննդեան օրը եւս Սահմանադրութեան ըստ Պուլիկինի ծրագրի հռչակումը, հակառակ ժողովրդի սպասումին տեղի չունեցաւ։

— Թիֆլիզի Կրանտ Օթէլին մէջ ձերբակալեր են չորս ռուս յեղափոխականներ, ձերբակալուածներուն սենեակին մէջ գտեր են ռումբ և Կովկասի փոխարքային պատկերը։

— Թիֆլիզի ոստիկանապետին և երկու կարեւոր պաշտօնեաներու վրայ սպաննութեան փորձ տեղի ունեցեր է։

— Բեթերսպուրկէն Բարիզ կը հաղորդեն որ լուր տարածուած է թէ ներքին գործոց նախարար Պուլիկին պաշտօնէն պիտի հրաժարի և անոր տեղը պիտի անցնի ժէնէրալ Թրէբով։

ԹԻՖԼԻՍ, 28 Յունիս 1905

Գործադուլը տարածուեց ամբողջ քաղաքումյունիսի 24.25ին։

Ամսոյս 24ին, կօզակները, ղեկավարութեամբ պրիստաւ Փիրումօվի, յարձակումներ գործեցին Վերայի խանութների վրայ։

Ջեն խրատում մի քանի հիմնարկութիւններ և դարձեալ շարունակում են իրանց հաշուապահներին աշխատեցնել։ Թեմ մի քանիսների անունները։ Աշխատել են ստիպում Ցոլլէի Սապոնի գործարանում իրանց հաշուապահներին։ Նոյնը անում են Ադելխանեանի գործարանը և Առեւտրական ու աղուականների բանկերը։ Թիֆլիզի դէպքերը արձագանք գտան և գտուռնեում։ Գորիում և Միխայլովում յայտարարուած է ընդհանուր գործադուլ։ Նոյնպէս գործադուլ է Շօրապանում և Սամտրէդիում (Քութայիսի նահանգ)։ Միխայլովում սպաննուած է մի կօնդուկտոր և վիրաւորուած մի մեքենավար—երկուսն էլ գործադուլի հակառակորդներ։

Թիֆլիզի Վերա կոչուած քաղաքամասում սպաննուած է կարի մեքենայի արհեստանոցի տէրը, որը հրաժարուում էր փակել արհեստանոցը։ Մի քանի խանութպաններ մինչեւ օրս շարունակում են գաղտնի կերպով առեւտուր անել։

Ուրբաթ, երեկոյեան ժամը 7ին, քաղաքի կենտրոնական մասերից մէկում, Սալդատսկի բաղարում, մի ռումբ պայթեց, որին զոհ գնացին երկու կօզակ և վիրաւորուեց մի կօզակ, իրանց ձիերի հետ միասին։ Նոյն օրը, ժամը 8 և կէսին, ռումբի պայթումից վիրաւորուեց յայտնի հայատեաց պրիստաւ Գլէբովը, որ վերջին դէպքերի ժամանակ աչկարաց կերպով զէնք էր բաժանում թուրք վայրենի ամբոխին և գործադուլի ժամանակ կոտրտում և փշրում էր խանութները, անխնայ կերպով ծեծի ենթարկելով խանութպաններին և անցորդներին։

Սրա հետ սպաննեց և մի օկօլոդչնի՝ Զիկվաձէ ազգանունով։ Վիրաւորուեցին թեթեւ կերպով երկու հոգի պատահական անցորդներից։ Նոյն գիշերը ժամը 10ին, քաղաքի ծայրերից մէկում —Կախէտինսկի փողոցի վրայ, որը տանում է դէպի Նաւթլուղ, մի ռումբի պայթումից սպաննեցին և վիրաւորուեցին 10 կօզակ, մի դռնապան և 4 կօզակի ձի։

Շաբաթ օրը, երեկոյեան ժամը 9ին, մի ռումբի պայթումից մեռան երկու ոստիկանական ստորին պաշտօնեայ (գօրոգովոյ) և երկու դռնապան։

Վնասեցին մի քանի հոգի պատահական անցորդներից։

Նոյն օրը, երեկոյեան ժամը 5ին Հալաբարում, ատրճանակի 7 հարուածով վիրաւորուեց մի օկօլոդչնի Թուխէվսկի ազգանունով։

Այսքան տէռորներ կատարելուց յետոյ սա եղակի դէպքն է, որ տէռորիստներին չը կարողացան վիրաւորել և ձերբակալել։ Միւս բոլոր տէռորիստները ազատ են։ Ամբողջ քաղաքը լցուած է վայրենի կօզակներով, զինուորներով, ոստիկաններով ու դռնապաններով։

Մութը ընկնելուց յետոյ քաղաքի որոշ մասերում կանգնած ոստիկանութիւնը խուզարկում է անցնող դարձողներին և եթէ որ և է մէկի մօտ գտնում է զէնք կամ որ և է կասկածելի իր կամ թռուցիկ անխնայ կերպով սկսում են ծեծել և քաշ տալ ոստիկանատուն։

Քաղաքի ազգաբնակութեանը պատել է աննկարագրելի սարսափ։ Գործադուլը դեռ շարունակում է։ Շաբաթ, 25 Յունիսի Հայոց կաթողիկոսը գնաց փոխարքայ Վ.օրոնցով Դաշկովի մօտ։ Նա էլ եկաւ. փոխայցելութեան։

ՖՐԱՆՍԱ

Բարիզէն օգոստոս մէկին կը հեռագրեն որ միջազգային իրաւարար ընկերութեան նախագահ Ֆրէտերիկ Բասի և միջազգային խաղաղութեան ընկերութեան նախագահ Արման Ռուսիոյ և Ճաբոնի միջեւ հաշտութիւն կայացնելու համար կազմուած յանձնախմբին, յանձին Քամուրայի և Ռուիթէի հետեւեալ հեռագիրը ուղղած են։—Մենք 100000 ֆրանսացիներու, հսլանտացիներու, գուիցերիացիներու, ունգարներու և աւստրիացիներու լիազօրներս կապաչենք ձեր կառավարութիւններէն որ զինադադար և պատուաւոր հաշտութիւն մը կնքեն։

Մենք չատ կը խնդրենք որ մեզ լիազօրութիւն աւողներուն ձայնին մտիկ ընէք ստորագրելով զինադադարը և վերջ տաք թշուառութեանց և ընդհանուր անապահովութեան, որ այդ պատերազմին հետեւանքն է։

ՆՈՐՎԷԿԻԱ

Խրիստիանայի մէջ յուլիս 31ին տեղի ունեցաւ ժողովրդային ընդհանուր քուէարկութիւն Շվէտիայէն բաժնուելու առթիւ 63000 ձայն ընդդէմ 34 բաժնուելու համաձայնութիւն տուեր են։

ՉԻՆԱՍՏԱՆ

Անգլիական «Տէյլը Թէլէկրաֆ» թերթին կը հեռագրեն որ Չինաստանի մէջ հակաեւրոպական շարժումները կրկին սկսած են. 1000ի չափ պուտտայական կրօնաւորներ յարձակում գործեր են Եւրոպացիներուն վրայ և չատ մը ֆրանսացի միսիոնարներ սպաներ և վիրաւորեր են։

Ֆրանսական դեսպանը այդ առթիւ խիստ բողոքագիր մը ներկայացուցեր է չին կառավարութեան։

ԱԶԴ

Տեղւոյս երկսեռ դպրոցի մէջ պաշտօնավարելու համար, կարող վարժուհիի մը պէտք կայ, գոհացուցիչ ամսականով, մանրամասնութեան համար դիմել տեղւոյն Հոգաբարձութեան ատենապետին։

Ի դիմաց Հոգաբարձութեան

Վ. Ատենադպիր — Ատենապետ
Վարդան — Աղէքսանդր Գ.
Արապեան — Փիզիրեան
(Կնիք)

23 Յուլիս 1905
Սլիվէն

Печатница на П. Глушковъ и С-ие, Варна